ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿՐԹՈՒԹՅԱՆ ԵՎ ԳԻՏՈՒԹՅԱՆ
ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՂԵԿԱՎԱՐ

РЕСПУБЛИКА АРМЕНИЯ
МИНИСТЕРСТВО ОБРАЗОВАНИЯ
И НАУКИ

РУКОВОДИТЕЛЬ АППАРАТА

REPUBLIC OF ARMENIA
MINISTRY OF EDUCATION
AND SCIENCE

HEAD OF STAFF

0010, Երևան, Գլխավոր պողոտա, կառավարական տուն 3, Հեռ./Тел./Tel.: 58 02 42, ֆաքս/факс/fax (374 10) 52 73 43,
0010, Ереван, Главный проспект, Дом правительства 3, 0010, Main Avenue, Government House 3, Yerevan, E-mail: headofstaff@edu.am, www.edu.am

N---------- «---------» ----------2015թ.

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏԻ ՏԵՂԱԿԱԼ
ԱՐԱՄ ՍՈՒՔԻԱՍՅԱՆԻՆ

Հարգելի պարոն Սուքիասյան

Ձեր եմ ներկայացնում ՀՀ կրթության և գիտության նախարարի 2015 թվականի մարտի 30-ի «Հանրակրթական ուսումնական հաստատությունների տարեկան բյուջեի պլանավորման և բյուջեի տարեկան ծախսերի հաշվետության կարգը հաստատելու մասին» N 205 Ա/Ք հրամանը՝ Երևանի քաղաքապետարանի ենթակայության հանրակրթական ուսումնական հաստատություններում ներդնելու և 2015-2016 ուսումնական տարվա ավարտին, լրամշակման անհրաժեշտության դեպքում, առաջարկություններով ՀՀ կրթության և գիտության նախարարությանը դիմելու համար:

Միևնույն ժամանակ հայտնում եմ, որ ՀՀ կրթության և գիտության նախարարի 2015 թվականի փետրվարի 24-ի՝ «Հայաստանի Հանրապետության կրթության և գիտության նախարարի 2010 թվականի մարտի 18-ի N 113-Ն հրամանում լրացում և փոփոխություններ կատարելու մասին» N 102-Ն հրամանով լրամշակվել է «Հայաստանի Հանրապետության «Պետական ուսումնական հաստատություն» պետական ոչ առևտրային կազմակերպության կոլեգիալ կառավարման մարմնի՝ խորհրդի ձևավորման կարգը»:

Կից ներկայացնում եմ ՀՀ կրթության և գիտության նախարարի 2015 թվականի փետրվարի 24-ի՝ «Հայաստանի Հանրապետության կրթության և գիտության նախարարի 2010 թվականի մարտի 18-ի N 113-Ն հրամանում լրացում և փոփոխություններ կատարելու մասին» N 102-Ն և ՀՀ կրթության և գիտության նախարարի՝ «Հանրակրթական ուսումնական

հաստատությունների տարեկան բյուջեի պլանավորման և բյուջեի տարեկան ծախսերի հաշվետության կարգը» 2015 թվականի մարտի 30-ի N 205 Ա/Ք հրամանները:

Առդիր՝ 9 թերթ:

ՀԱՐԳԱՆՔՈՎ՝ ՄՀԵՐ ՂԱԶԱՐՅԱՆ

Կատ.՝ Թ. Կարախանյան
հեռ.՝ 524777

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ԿՐԹՈՒԹՅԱՆ ԵՎ ԳԻՏՈՒԹՅԱՆ

ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՂԵԿԱՎԱՐ

РЕСПУБЛИКА АРМЕНИЯ
МИНИСТЕРСТВО ОБРАЗОВАНИЯ
И НАУКИ

РУКОВОДИТЕЛЬ АППАРАТА

REPUBLIC OF ARMENIA
MINISTRY OF EDUCATION
AND SCIENCE

HEAD OF STAFF

0010, Երևան, Գլխավոր պողոտա, կառավարական տուն 3, Հեռ./Тел./Tel.: 58 02 42, ֆաքս/факс/fax (374 10) 52 73 43,
0010, Ереван, Главный проспект, Дом правительства 3, 0010, Main Avenue, Government House 3, Yerevan, E-mail: headofstaff@edu.am, www.edu.am

N---------- «--------» ----------2015թ.

ՀՀ Գեղարքունիքի մարզպետարանի

աշխատակազմի ղեկավար Ս.Խլղաթյանին

ՀՀ Լոռու մարզպետարանի

աշխատակազմի ղեկավար Ա.Մանուկյանին

ՀՀ Շիրակի մարզպետարանի

աշխատակազմի ղեկավար պարոն Խ.Պողոսյանին

ՀՀ Տավուշի մարզպետարանի

աշխատակազմի ղեկավար Ս.Դավթյանին

ՀՀ Արագածոտնի մարզպետարանի

աշխատակազմի ղեկավար Հ.Գևորգյանին

ՀՀ Արմավիրի մարզպետարանի

աշխատակազմի ղեկավար Փ.Կարապետյանին

ՀՀ Արարատի մարզպետարանի

աշխատակազմի ղեկավար Արմեն Մարգարյանին

ՀՀ Կոտայքի մարզպետարանի

աշխատակազմի ղեկավար Մ.Գարեգինյանին

ՀՀ Սյունիքի մարզպետարանի

աշխատակազմի ղեկավար Ռ.Ղազարյանին

ՀՀ Վայոց Ձորի մարզպետարանի

աշխատակազմի ղեկավար Կ.Սահակյանին

Հարգելի գործընկեր

Ձեր եմ ներկայացնում ՀՀ կրթության և գիտության նախարարի 2015 թվականի մարտի 30-ի «Հանրակրթական ուսումնական հաստատությունների տարեկան բյուջեի պլանավորման և բյուջեի տարեկան ծախսերի հաշվետության կարգը հաստատելու մասին» N 205 Ա/Ք հրամանը՝ մարզպետարանի ենթակայության հանրակրթական ուսումնական հաստատություններում ներդնելու և 2015-2016 ուսումնական տարվա ավարտին, լրամշակման անհրաժեշտության դեպքում, առաջարկություններով ՀՀ կրթության և գիտության նախարարությանը դիմելու համար:

Միևնույն ժամանակ հայտնում եմ, որ ՀՀ կրթության և գիտության նախարարի 2015 թվականի փետրվարի 24-ի՝ «Հայաստանի Հանրապետության կրթության և գիտության նախարարի 2010 թվականի մարտի 18-ի N 113-Ն հրամանում լրացում և փոփոխություններ կատարելու մասին» N 102-Ն հրամանով լրամշակվել է «Հայաստանի Հանրապետության «Պետական ուսումնական հաստատություն» պետական ոչ առևտրային կազմակերպության կոլեգիալ կառավարման մարմնի՝ խորհրդի ձևավորման կարգը»:

Կից ներկայացնում եմ ՀՀ կրթության և գիտության նախարարի 2015 թվականի փետրվարի 24-ի՝ «Հայաստանի Հանրապետության կրթության և գիտության նախարարի 2010 թվականի մարտի 18-ի N 113-Ն հրամանում լրացում և փոփոխություններ կատարելու մասին» N 102-Ն և ՀՀ կրթության և գիտության նախարարի՝ «Հանրակրթական ուսումնական հաստատությունների տարեկան բյուջեի պլանավորման և բյուջեի տարեկան ծախսերի հաշվետության կարգը» 2015 թվականի մարտի 30-ի N 205 Ա/Ք հրամանները:

Առդիր՝ 9 թերթ:

ՀԱՐԳԱՆՔՈՎ՝ **ՄՀԵՐ ՂԱԶԱՐՅԱՆ**

Կատ.՝ Թ. Կարախանյան
հեռ.՝ 524777

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ ԵՎ ԳԻՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐ

ՀՐԱՄԱՆ

№ _____ «____» _____ 2015

ՀԱՆՐԱԿՐԹԱԿԱՆ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՏԱՐԵԿԱՆ ԲՅՈՒՋԵԻ ՊԼԱՆԱՎՈՐՄԱՆ ԵՎ ԲՅՈՒՋԵԻ ՏԱՐԵԿԱՆ ԾԱԽՍԵՐԻ ՀԱՇՎԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով ՀՀ կառավարության 2014 թվականի հուլիսի 31-ի՝ «Բաց կառավարման գործընկերություն» նախաձեռնության շրջանակներում Հայաստանի Հանրապետության երկրորդ գործողությունների ծրագրին հավանություն տալու մասին N 32 արձանագրային որոշման 9-րդ կետի պահանջով՝

ՀՐԱՄԱՅՈՒՄ ԵՄ՝

Հաստատել «Հանրակրթական ուսումնական հաստատությունների տարեկան բյուջեի պլանավորման և բյուջեի տարեկան ծախսերի հաշվետության կարգը»՝ համաձայն Հավելվածի:

ԱՐՄԵՆ ԱՇՈՏՅԱՆ

Հավելված

ՀՀ կրթության և գիտության նախարարի
2015 թ. մարտի ____ի N ___ հրամանի

ԿԱՐԳ

ՀԱՆՐԱԿՐԹԱԿԱՆ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՏԱՐԵԿԱՆ ԲՅՈՒՋԵԻ ՊԼԱՆԱՎՈՐՄԱՆ ԵՎ ԲՅՈՒՋԵԻ ՏԱՐԵԿԱՆ ԾԱԽՍԵՐԻ ՀԱՇՎԵՏՈՒԹՅԱՆ

I. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1. Սույն կարգով կարգավորվում են հանրակրթական ուսումնական հաստատությունների (այսուհետ՝ ՀՈՒՀ) տարեկան բյուջեի պլանավորման և բյուջեի տարեկան ծախսերի հաշվետության հետ կապված հարաբերությունները:

2. Կանխատեսվող բյուջետային տարվա համար մշակվող քաղաքականությունը պետք է համահունչ լինի ՀՈՒՀ զարգացման տարեկան ծրագրի հիմնադրույթներին և հաշվի առնի տվյալ տարվա բյուջետային առանձնահատկությունները, առաջնահերթություններն ու նպատակները: Այն պետք է լինի իրատեսական, հիմնվի ՀՈՒՀ առկա ներուժի վրա և արտացոլի վերջինիս զարգացման ուղիներն ու եղանակները:

3. ՀՈՒՀ բյուջեի կատարումը ծախսերի իրականացման կանոնակարգված գործունեությունն է, որի կատարման պատասխանատուն ՀՈՒՀ տնօրենն է:

4. Բյուջետային գործընթացն իրականացվում է երեք հիմնական փուլերով՝

1) բյուջեի պլանավորում, նախագծի կազմում, հաստատում,

2) բյուջեի կատարում և վերահսկողություն,

3) բյուջեի կատարման տարեկան հաշվետվության կազմում և հաստատում:

II. ԲՅՈՒՋԵԻ ՊԼԱՆԱՎՈՐՈՒՄ, ՆԱԽԱԳԾԻ ԿԱԶՄՈՒՄ, ՀԱՍՏԱՏՈՒՄ

5. ՀՈՒՀ տնօրենը տվյալ տարվա սեպտեմբերի 1-ից սկսած պլանավորում և կազմում է ՀՈՒՀ առաջիկա տարվա բյուջեի նախագիծը՝ բյուջետային համակարգի միասնականությունն ապահովող բյուջետային գործընթացի կազմակերպման համաձայնեցված սկզբունքների, բյուջետային դասակարգման, հաշվառման և հաշվետվության միասնական մեթոդաբանության հիման վրա:

6. Բյուջետային գործընթացի առաջին փուլը՝ ՀՈՒՀ բյուջեի նախագծի մշակման գործընթացը բաժանվում է 3 մասի.

1) բյուջեի պլանավորման, նախագծի մշակման աշխատանքների նախապատրաստում և կազմակերպում,

2) բյուջեի նախագծի մշակում,

3) բյուջեի նախագծի հաստատում:

7. ՀՈՒՀ բյուջեի նախագծի մշակման, հաստատման և բյուջեի կատարման հաշվետվությունների աշխատանքները կազմակերպելու նպատակով ՀՈՒՀ տնօրենը կազմում է հանրակրթական ուսումնական հաստատության բյուջետային օրացույց (Ձև 1), որտեղ պետք է նշվեն՝

1) բյուջեի նախագծի նախնական տարբերակի մշակման,

2) բյուջեի նախագծի հանրային քննարկումների կազմակերպման ու լրամշակման,

3) բյուջեի նախագիծը ՀՈՒՀ կառավարման խորհրդին և պետական լիազոր մարմնին ներկայացման,

4) բյուջեի կատարման կիսամյակին և տարեկան հաշվետվությունների ներկայացման ու հրապարակման ժամկետները:

8. ՀՈՒՀ բյուջեի նախագծի մշակման ուղղությամբ ՀՈՒՀ տնօրենը կարող է հանձնարարականներ տալ և նշանակել դրանց կատարման համար պատասխանատուներ:

9. ՀՈՒՀ բյուջեի նախագծի մշակման աշխատանքների նախապատրաստական փուլում ՀՈՒՀ տնօրենը՝ բյուջետային գործընթացին անհրաժեշտ ուղղվածություն տալու, բյուջեի մշակման աշխատանքների վերջնական արդյունքների արդյունավետությունն ապահովելու նպատակով՝ ապահովում է՝

1) ՀՈՒՀ բյուջեի նախագծի նախնական տարբերակի հանրային քննարկման կազմակերպումը՝ նախագծի վերաբերյալ դիտողություններ և առաջարկություններ ստանալու համար,

2) ՀՈՒՀ բյուջեի նախագծի նախնական տարբերակի քննարկում մանկավարժական խորհրդի, ծնողական և աշակերտական խորհուրդների, ՀՈՒՀ կառավարման խորհրդի, քաղաքացիների և բոլոր շահագրգիռ կողմերի հետ՝ առաջարկներ ստանալու և պարզաբանումներ տալու նպատակով,

3) ստացած դիտողությունների և առաջարկությունների հիման վրա ՀՈՒՀ բյուջեի նախագծի վերջնական տարբերակի մշակումը:

10. Մինչև ընթացիկ տարվա դեկտեմբերի 15-ը, ՀՈՒՀ տնօրենը, բյուջեի նախագիծը, ինչպես նաև դրա առնչությամբ ստացված դիտողությունների և առաջարկությունների ամփոփաթերթը ներկայացնում է կառավարման խորհրդին:

11. Կառավարման խորհուրդը, քննարկում է ներկայացված նախագիծը և առաջարկությունների և դիտողությունների ամփոփաթերթը, և ընդունում է որոշում

1) նախագծին հավանություն տալու կամ

2) նախագիծը լրամշակման վերադարձնելու մասին՝ նշելով կատարման հստակ ժամկետներ:

12. Կառավարման խորհուրդը, բյուջեի նախագծի վերաբերյալ առաջարկ ներկայացրած քաղաքացիներին հրավիրում է բյուջեի պլանավորման համար հրավիրված նիստին՝ իրենց առաջարկների մասով քննարկումների և պարզաբանումներ ստանալու նպատակով:

13. ՀՈՒՀ տնօրենը, նախագիծը կառավարման խորհրդի կողմից հավանության արժանանալուց հետո, ներկայացնում է պետական լիազորված մարմնին:

III. ԲՅՈՒՋԵԻ ԿԱՏԱՐՈՒՄ ԵՎ ՎԵՐԱՀՍԿՈՂՈՒԹՅՈՒՆ

14. Լիազորված մարմնի կողմից ՀՈՒՀ բյուջեն հաստատվելուց հետո օրենքով և այլ իրավական ակտերով սահմանված կարգով ՀՈՒՀ տնօրենը՝

1) Լիազորված մարմնի կողմից տրամադրված տեղեկատվության հիման վրա կազմում է ՀՈՒՀ բյուջեի եռամսյակային համամասնությամբ,

2) կազմված ծախսերի նախահաշիվները՝ եռամսյակային բաշխմամբ ներկայացնում է կառավարման խորհրդի քննարկման

3) պատրաստում և կառավարման խորհրդին է ներկայացնում բյուջեի կատարման վերաբերյալ կիսամյակային և տարեկան հաշվետվություններ:

15. Մինչև ՀՈՒՀ բյուջեն լիազորված մարմնի կողմից հաստատվելը ծախսերը կատարվում են նախորդ տարվա բյուջեի համամասնություններով՝ հաշվի առնելով ընթացիկ տարում բյուջեի վրա ազդող ի հայտ եկած նոր էական հանգամանքները:

16. ՀՈՒՀ բյուջեի կատարման ընթացքում ՀՈՒՀ տնօրենը կարող է ՀՈՒՀ տվյալ տարվա բյուջեի ծախսերի բաշխումներում կատարել բյուջեն հաստատելու մասին՝ իրավական ակտերին չհակասող փոփոխություններ՝ սույն կարգով սահմանված կարգով:

17. ՀՈՒՀ կառավարման խորհուրդը բյուջետային պարտավորությունների կատարման նպատակով իրականացնում է վերահսկողություն՝ կազմման, քննարկման և հաստատման կատարման նկատմամբ:

IV. ԲՅՈՒՋԵԻ ԿԱՏԱՐՄԱՆ ՏԱՐԵԿԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅԱՆ ԿԱԶՄՈՒՄ ԵՎ ՀԱՍՏԱՏՈՒՄ

18. ՀՈՒՀ տնօրենը բյուջեի կատարման վերաբերյալ կառավարման խորհրդին ներկայացնում է հաշվետվություն՝ կիսամյակային և տարեկան, այլ ժամկետներում՝ կառավարման խորհրդի պահանջով:

19. ՀՈՒՀ բյուջեի կատարման տարեկան հաշվետվությունը պարունակում է՝

1) տեղեկություններ հաշվետու տարում ՀՈՒՀ բյուջեի մուտքերի և ելքերի վերաբերյալ, դրանց համեմատական վերլուծությունը հաշվետու տարվան նախորդող տարվա փաստացի և հաշվետու տարվա համար հաստատված և փաստացի կատարված համապատասխան ցուցանիշների միջև,

2) տեղեկություններ հաշվետու տարում ՀՈՒՀ բյուջեի կատարված ծախսերի ուղղությունների և չափերի մասին՝ համապատասխան հիմնավորումներով,

3) այլ տեղեկություններ, որոնք ՀՈՒՀ տնօրենն անհրաժեշտ է համարում ՀՈՒՀ բյուջեի կատարման արդյունքները ներկայացնելու և հիմնավորելու համար:

20. ՀՈՒՀ տնօրենը բյուջեի կատարման տարեկան հաշվետվությունը կառավարման խորհրդին է ներկայացնում բյուջետային տարին ավարտվելուց հետո՝ մինչև հաշվետու բյուջետային տարվան հաջորդող տարվա մարտի 15-ը:

21. Կիսամյակային հաշվետվությունը ներկայացվում է կառավարման խորհրդի հերթական նիստում կամ խորհրդի պահանջով՝ խորհրդի սահմանած ժամկետներում:

V. ԲՅՈՒՋԵԻ ՀՐԱՊԱՐԱԿԱՅՆՈՒԹՅՈՒՆԸ

22. ՀՈՒՀ բյուջեի հրապարակայնությունն ապահովելու, բյուջեի մշակման, քննարկման, կատարման և վերահսկման աշխատանքներին համայնքի բնակչության, բոլոր շահագրգիռ կազմակերպություններին իրազեկելու և ներգրավելու նպատակով ՀՈՒՀ տնօրենը՝

1) ՀՈՒՀ բյուջեի նախագիծը կառավարման խորհրդին ներկայացնելուց 20 օր առաջ հրապարակում է հաստատության պաշտոնական կայքում, հաստատության հայտարարությունների համար նախատեսված անկյունում, կարող է հրապարակել նաև տեղական մամուլում՝ քաղաքացիներից, շահագրգիռ կազմակերպություններից 15-օրյա ժամկետում **կարծիքներ, առաջարկներ ստանալու համար:**

2) բյուջետային տարվա յուրաքանչյուր եռամսյակից հետո՝ աճողական կարգով, 15 օրվա ընթացքում հրապարակում է տեղեկատվություն ՀՈՒՀ բյուջեի եռամսյակային կատարման մասին՝ հաստատության պաշտոնական կայքում, հաստատության հայտարարությունների համար նախատեսված անկյունում, կարող է հրապարակել նաև տեղական մամուլում:

3) ՀՈՒՀ բյուջեի կատարման տարեկան հաշվետվությունը ՀՈՒՀ կառավարման խորհրդի հավանությանն արժանանալուց հետո հնգօրյա ժամկետում հրապարակվում է ՀՈՒՀ պաշտոնական կայքում կամ տեղական մամուլում և ՀՈՒՀ հայտարարությունների անկյունում:

Ձև 1

ՀԱՆՐԱԿՐԹԱԿԱՆ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅԱՆ ԲՅՈՒՋԵՏԱՅԻՆ ՕՐԱՑՈՒՅՑ

Ժամկետ	Աշխատանքներ	Պատասխանատու կատարող
01սեպտեմբեր-20սեպտեմբեր	1.Հաջորդ տարվա բյուջեի նախագծի նախնական տարբերակի կազմում	

21 սեպտեմբեր- 10 հոկտեմբեր 11 հոկտեմբեր- 30 հոկտեմբեր	1. Բյուջեի նախագծի նախնական տարբերակի քննարկում մանկավարժական խորհրդի, ծնողական և աշակերտական խորհուրդների, ՀՈՒՀ կառավարման խորհրդի, քաղաքացիների և բոլոր շահագրգիռ կողմերի հետ: 2. Հաջորդ տարվա բյուջեի նախագծի նախնական տարբերակի հանրային քննարկումների կազմակերպում:	
31 հոկտեմբեր- 15 նոյեմբեր	1. Առաջարկված դիտողությունների և առաջարկությունների հիման վրա բյուջեի նախագծի նախնական տարբերակի փոփոխությունների կատարում:	
մինչև դեկտեմբերի 15-ը	2. Բյուջեի նախագծի քննարկում և հավանության արժանացում կառավարման խորհրդի կողմից:	
Փետրվարի 1-ից 28-ը	Բյուջեի հաստատում հիմնադրի կողմից	
Մինչև մարտի 15-ը	Տարեկան հաշվետվությունների ներկայացում և հրապարակում	